ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 66-Ա

ԱՐՄԵՆ,ԱՐՏԱՇ ԵՎ ԱՇԽԵՆ ՄԱՄԻԿՈՆԻ ԳԱԼՍՏՅԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԱՌԱՆԻ,ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ քաղ. օրենսգրքի 188-րդ հոդվածի պահանջներով,ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 731-Ն,N 912-Ն որոշման 3-րդ և 33-րդ կետերով, ՀՀ կառավարույան 2005թ դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,հիմք ընդունելով << ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագիծը և Արմեն Մամիկոնի Գալստյանի /մուտք. 09.07.2020թ. թիվ 170/ դիմումը՝ որոշում եմ.

1.Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0020-0018 ծածկագրից առանձնացված բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում Արմեն, Արտաշ և Աշխեն Մամիկոնի Գալստյանների կողմից 2000թ. ինքնակամ կառուցված 32.94քմ արտաքին մակերեսով մառանի և 11.6քմ բաց պատշգամբի նկատմամբ ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը:
2.Օրինականացնել Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0020-0018 ծածկագրից առանձնացված բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում Արմեն,Արտաշ և Աշխեն Մամիկոնի Գալստյանների կողմից 2000թ. ինքնակամ կառուցված 32.94 քմ արտաքին մակերեսով մառանը և 11.6քմ մակերեսով բաց պատշգամբը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.02986 հա մակերեսով հողամասով:
3. Մառանը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինկան նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4.Հողամասն ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Անշարժ գույքին տրամադրել փոստային նոր <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք.Թումանյան, 6-րդ փողոց, թիվ 35>> հասցեն:
6. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն սույն որոշման 1-ին կետում նշված կառույցն իրականացրած անձանց՝ Արմեն, Արտաշ և Աշխեն Մամիկոնի Գալստյաններին մառանը,բաց պատշգամբը և հողամասն ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 67-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ 09072020-06-0049 ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՒՄ ՓՈՓՈԽԵԼՈՒ,ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,ՀՈՂԱՄԱՍԸ ՓԱՍՏԱՑԻ ՃԻՇՏ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԵՎ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԵՐԱԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով,ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ, 10-րդ, 52-րդ, 53-րդ հոդվածներով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/06/2010 թվ թիվ 186-Ն հրամանով,հիմք ընդունելով սեփականության 09072020-06-0049 վկայականը, <<ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ>> ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, Կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանման կողմից տրված Կադաստրային քարտեզի քաղվածքը, հաշվի առնելով այն հանգամանքը որ առաջին պետական գրանցման նպատակով Թումանյան համյանքում կատարված քարտեզագրումը կատարվել է էական սխալներով և հիմք ընդունելով հողամասի փաստացի տեղազննումը՝

որոշում եմ.

1. Հաստատել Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի 06-004-00020-0021 կադաստրային ծածկագրում գտնվող հողամասի գծային սահմանային չափերը համաձայն որոշման հավելված հանդիսացող՝ որակավորված անձի կողմից տրված հատակագծի:

2. Հաստատել Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի 06-004-00020-0021 կադաստրային ծածկագրում գտնվող հողամասի գծային մակերեսը՝ 0.0695հա համաձայն որոշման հավելված հանդիսացող՝ որակավորված անձի կողմից տրված հատակագծի:

3. Տալ համաձայնություն 09072020-06-0049 վկայականով իրավունքի պետական գրանցում ստացած հողամասի սահմանային չափերի և մակերեսի փոփոխությանը համաձայն որակավորված անձի կողմից տրված հատակագծի:

4. Սեփականության թիվ 09072020-06-0049 վկայականով գրանցված հողամասի մակերեսը հաստատել 0.06952 հա:

5.Հողամասի նպատակային նշանակությունը հաստատել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակություն բնակելի կառուցապատման:

6.Հողամասսին տրամադրել փոստային նոր <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք ք.Թումանյան, 6-րդ փողոց, թիվ 37>> հասցեն:

7.Հողամասի սահմանները որոշվում են կից ներկայացվող համայնքի ղեկավարի կողմից հաստատված որակավորված անձի կողմից տրված հատակագծի:

8.Հողամասում առկա շինությունները ենթակա են գրանցման նշագծված տարբերակով, որը կօրինականացվի ՀՀ Կառավարության 18.05.2006 No: 912-Ն որոշման համաձայն հողամասի սահմանները ուղղելով պետական գրանցում ստանալուց հետո:

9.Նշված սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 68-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ)ենթակետով՝

որոշում եմ.

1.Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0011-0017 ծածկագրի բնակավայրերի նշանակության 0,00866 հա մակերեսով այլ հողեր հողամասին տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք,ք.Թումանյան,2-րդ փողոց, թիվ 5/5 հողամաս>> հասցեն:
2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ